Հ ՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ, ՍՈՒՐԵՆ ՀՈԲՈՍՅԱՆ, ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը միջմասնագիտական հետազոտություններ իրականացնող հայագիտական այն եզակի հաստատություններից է, որտեղ կենտրոնացված են հնագիտության, ազգագրության, ազգաբանության, վիմագրության, բանագիտության, էթնո-սոցիոլոգիայի, ֆիզիկական մարդաբանության, հնակենսաբանության բնագավառներում կատարվող ուսումնասիրությունները: Ինստիտուտի գիտական գործունեության ոլորտում առանձնահատուկ տեղ ունեն հնագիտական, ազգագրական, բանագիտական դաշտային հետազոտությունները, որոնք տարվում են անընդմեջ՝ Հայաստանի նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության, հայոց պատմության ուսումնասիրության աղբյուրագիտական հենքը ձևավորելու և հարստացնելու նպատակով:

Հիմնադրվել է 1959 թ. և ստեղծման առաջին տարիներից մինչ օրս ինստիտուտի գիտական անձնակազմի մի քանի սերունդների ջանքերով պեղվել, հավաքվել, մշակվել ու հրատարակվել են հայոց նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության ուսումնասիրության համար անհրաժեշտ մեծ քանակի սկզբնաղբյուրներ: Ինստիտուտի կայացման, գիտական հետազոտությունների թեմատիկ ուղղությունների մշակման և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման գործում անուրանալի ավանդ ունեն ինստիտուտի տնօրեններ՝ ակադ. Բ. Առաքելյանը՝ 1959–1988 թթ., պատ. գիտ. դոկտոր Գ. Տիրացյանը՝ 1988–1993 թթ., ԳԱԱ թղթակից անդամ Ա. Քալանթարյանը՝ 1993–2006 թթ., փոխտնօրեններ՝ պատ. գիտ. թեկնածու Կ. Մելիք-Փաշայանը՝ 1959–1981 թթ., ԳԱԱ թղթակից անդամ Ս. Հարությունյանը՝ 1992–2006 թթ.: Այսօր էլ նոր ղեկավարությունը՝ (տնօրեն պատ. գիտ. թեկնածու Պ. Ավետիսյան՝ 2006 թ. մինչ օրս, տնօրենի տեղակալ՝ պատ. գիտ. թեկնածու՝ Գ. Սարգսյան՝ 2006 թ. մինչ օրս)՝ շարունակելով նախկին ավանդույթները, զգալի աշխատանք է տանում հետազոտական ծրագրերի մշակման և իրականացման, կադրերի համալրման ու վերապատրաստման, դաշտային հետազոտությունների ու գիտական հրատարակությունների կազմակերպման ուղղություններով: Ինստիտուտն այսօր ձեռք է բերել միջազգային համբավ, գիտական ամուր կապերով համագործակցում է արտերկրի բազմաթիվ կենտրոնների և մասնագետների հետ:

Հնագիտություն

Մայրաքաղաք Անիի պեղումների հենքի վրա ձևավորված հայկական հնագիտական դպրոցի կարկառուն ներկայացուցիչների և նրանց աշակերտների ջանքերով (Ն. Մառ, Հ. Օրբելի, Աշխ. Քալանթար, Ս. Տեր-Ավետիսյան, Ե. Բայբուրդյան, Բ. Պիոտրովսկի, Կ. Ղաֆադարյան, Բ. Առաքելյան) XX դարի առաջին կեսին հնագիտական հետազոտությունների ոլորտում նշանակալից արդյունքներ ձեռք բերվեցին, ինչն էլ իր հերթին հնագիտության և ազգագրության ինստիտուտի ստեղծման նախապայմաններից մեկը դարձավ: Ինստիտուտի ստեղծումով լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգության փաստագրման և լուսաբանման գործը դարձավ համակարգված ուսումնասիրությունների առարկա: Հիսուն տարուց ավելի շարունակվող ծրագրավորված աշխատանքների շնորհիվ կարևոր արդյունքներ են գրանցվել մարդագոյացման, վաղ երկրագործական հասարակությունների ձևավորման գործընթացների, հին և միջնադարյան Հայաստանի պատմության ու մշակույթի ուսումնասիրության ոլորտներում: Մասնավորապես, քարիդարյան տարաբնույթ հուշարձանների (Երևան 1, Լուսակերտ, Հատիս, Քասախի ու Դեբեդի կիրճի և այլ հնավայրեր) պեղումների, գտածոների, հումքի աղբյուրների, կենսապայմանների ուսումնասիրությունների շնորհիվ վեր են հանվել լեռնաշխարհի բնակեցման վաղագույն փուլերի հիմնական օրինաչափություններն ու առանձնահատկությունները, լեռնաշխարհում բանական մարդու տարածման աշխարհագրական, էկոլոգիական, տնտեսական ասպեկտները, վերին պալեոլիթյան հասարակությունների կենսապահովման համակարգի բնութագրական հիմնական հատկանիշները (Բ. Երիցյան, Հ. Ղազարյան, Բ. Գասպարյան):

Բացահայտվել, նկարագրվել և բնութագրվել են Ք. ա. VII–I հազարամյակների մեկ տասնյակ հնագիտական մշակույթներ, դրանց կերտող հասարակությունների զարգացման առանձնահատկությունները, վաղ պետական կազմավորումների հնագիտական դրսևորումները:

Նեոլիթյան և էնեոլիթյան մի շարք բնակատեղիների (Թեղուտ՝ Ռ. Թորոսյան, Մասիս բլուր, Ադաբլուր՝ Գ. Արեշյան, Առատաշեն, Ակնաշեն՝ Ռ. Բաղալյան, Ն. Գոդեձոր՝ Պ. Ավետիսյան, Արենի 1՝ Բ. Գասպարյան) պեղումների շնորհիվ վեր է հանվել լեռնաշխարհը բնակեցնող վաղ երկրագործական-անասնապահական հասարակությունների՝ մ. թ. ա. VII–IV հազարամյակներով ժամանակագրվող մշակույթների ձևավորման ու զարգացման դինամիկան, լուսաբանվել են տնտեսությանը, հումքային բազային, առևտրին, մշակութային փոխառնչություններին վերաբերող բազմաթիվ հարցեր:

Հնագույն Հայաստանի բրոնզ-երկաթիդարյան հնագիտական մշակույթների բացահայտման, լեռնաշխարհին բնորոշ հասարակական զարգացումների առանձնահատկությունների լուսաբանման համար առանցքային նշանակություն ունեն ինստիտուտի արշավախմբերի ուժերով պեղված Կարմիր բլուրի նախաուրարտական շրջանի (Հ. Մարտիրոսյան), Ջրահովիտի, Մեծամորի (Է. Խանզադյան), Հառիճի (Տ. Խաչատրյան), Այգևանի

(Ս. Եսայան), Մոխրաբլուրի (Գ. Արեշյան), Հոռոմի, Գեղարոտի (Ռ. Բադալյան), Ագարակի (Պ. Ավետիսյան) բնակատեղիների նյութերի ուսումնասիրությունները: Բրոնզ-երկաթիդարյան Հայաստանի մշակույթների ամբողջական նկարագրության, պարբերացման և ժամանակագրության համակարգի ձևավորման համար կարևոր տվյալներ են ձեռք բերվել ՀՀ տարբեր շրջաններում պեղված դամբարանադաշտերից (Լոռի Բերդ՝ Ս. Դևեջյան, Լճաշեն՝ Լ. Պետրոսյան, Օշական՝ Ս. Եսայան, Ա. Քալանթարյան, Քարաշամբ՝ Վ. Հովհաննիսյան, Թալին՝ Պ. Ավետիսյան, Ծաղկալանջ՝ Ֆ. Մուրադյան, Հոռոմ՝ Ռ. Բադալյան, Սյունիք՝ Օ. Խնկիկյան և այլն): Զգալի աշխատանք է տարվել Հայկական լեռնաշխարհի ողջ տարածքն ընդգրկող հնավայրերի հետ կապված ուսումնասիրությունների արդյունքների համակարգման և նորովի մեկնաբանման ոլորտում (Ա. Բոբոխյան):

Ուսումնասիրվել են Վանի թագավորության (Կարմիր բլուր՝ Բ. Պիոտրովսկի, Հ. Մարտիրոսյան, Արգիշթիխինիլի՝ Հ. Մարտիրոսյան, Օշական՝ Ս. Եսայան, Ա. Քալանթարյան, Դովրի՝ Ս. Հմայակյան), հելլենիստական, անտիկ շրջանների, միջնադարյան խոշոր բնակավայրեր, հայոց մայրաքաղաքները (Արտաշատ, Դվին, Գառնի, Արմավիր, Կարճաղբյուր, Հոռմիկ, Բենիամին, Արցախի Տիգրանակերտ, Երվանդաշատ՝ Բ. Առաքելյան, Գ. Տիրացյան, Կ. Ղաֆադարյան, Ա. Քալանթարյան, Ժ. Խաչատրյան, Ֆ. Տեր-Մարտիրոսով, Ի. Կարապետյան, Հ. Պետրոսյան, Հ. Հակոբյան):

Հիմնարար հետազոտություններ են կատարվել միջնադարյան վանական համալիրների ուսումնասիրության ոլորտում (Վահանավանք՝ Գ. Գրիգորյան, Խամշի վանք՝ Գ. Կարախանյան, Մարմաշեն՝ Ս. Հարությունյան, Ուշի, Հառիճ՝ Ֆ. Բաբայան, Աքորի, Աղիտու, Հանդաբերդ՝ Հ. Պետրոսյան, Ցախաց քար՝ Հ. Մելքոնյան, Թեղենյաց՝ Գ. Սարգսյան և այլն): Հետազոտվել են անտիկ և քրիստոնեական Հայաստանի նյութական և հոգևոր մշակույթի բազմաշերտ դրսևորումները (Բ. Առաքելյան, Կ. Ղաֆադարյան, Գ. Տիրացյան, Գ. Կարախանյան, Ա. Քալանթարյան, Ժ. Խաչատրյան, Ս. Հարությունյան, Ֆ. Բաբայան, Ա. Ժամկոչյան, Ն. Հակոբյան, Ֆ. Տեր-Մարտիրոսով, Հ. Պետրոսյան, Ի. Կարապետյան, Հ. Մելքոնյան, Մ. Զարդարյան, Գ. Քոչարյան և ուրիշներ):

ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Գերմանիայի դաշնության, Իտալիայի, Բելգիայի, Ավստրիայի տարբեր համալսարանների ու գիտական կենտրոնների հետ իրականացվել են հնագիտական ուսումնասիրություններ Հայաստանի տարբեր մարզերում, ինչի շնորհիվ հիմնովին թարմացվել է Հայկական լեռնաշխարհի և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության ու մշակույթի ուսումնասիրության աղբյուրագիտական հենքը, օտար լեզուներով հրատարակվել են բազմաթիվ մենագրություններ և հոդվածներ (Ռ. Բադալյան, Պ. Ավետիսյան, Ս. Հմայակյան, Ա. Բոբոխյան, Բ. Գասպարյան, Մ. Զարդարյան և ուրիշներ):

Հավաքվել, վերծանվել և մեկնաբանվել են Հայկական լեռնաշխարհի և գաղթօջախների հարյուրավոր վիմագիր արձանագրություններ (Կ. Ղաֆադարյան, Ս. Բարխուդարյան, Գ. Գրիգորյան, Գ. Սարգսյան): Երկար տարիների ընդմիջումից հետո, 2012 թ. հրատարակվեց «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի 8-րդ հատորը (Գ. Սարգսյան):

Հնագիտության և վիմագրագիտության ոլորտներում ինստիտուտի գիտական ուսումնասիրությունների արդյունքներն իրենց արտացոլումն են գտել «Հնագիտական պեղումները Հայաստանում», «Հայաստանի հնագիտական հուշարձանները», «Դիվան հայ վիմագրության» մատենաշարերում և բազմաթիվ մենագրություններում: Ինստիտուտում կատարված ուսումնասիրությունների շնորհիվ մշակվել են պարբերացման և ժամանակագրության նոր համակարգեր, որոնք մեծ ընդունելություն են գտել և օգտագործվում են ոչ միայն Հայկական լեռնաշխարհի, այլև հարևան շրջանների հնագույն մշակույթների զարգացման դինամիկան սկզբունքորեն նոր տվյալներով ներկայացնելու համար:

Ազգագրություն

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գործունեության առաջին տարիներից սկսած՝ հիմնարար ուսումնասիրություններ են կատարվել ազգագրության ոլորտում, հատկապես հայոց նյութական և հոգևոր մշակույթի, պատմազգագրական առանձին շրջանների, ազգագրության տեսական ու մեթոդաբանական հիմնախնդիրների ուղղությամբ: Հայ ազգագրական գիտության կայացման ու միջազգային գիտական հանրության կողմից ճանաչման գործում մեծ նպաստ ունեցան Դ. Վարդումյանը, Վ. Բդոյանը, Է. Կարապետյանը, Կ. Մելիք-Փաշայանը, Ա. Օդաբաշյանը: 1950-ական թվականներից Դաշտային հետազոտությունների շնորհիվ հիմնավորապես ուսումնասիրվեցին հայոց տնտեսական զբաղմունքները, կենցաղն ու սովորույթները: Հետազոտվեցին և հրատարակվեցին հայ ժողովրդի տնտեսական կենցաղին, նյութական ու հոգևոր մշակույթի ազգագրական դրսևորումներին, ավանդական և ժամանակակից հասարակական հարաբերություններին, ժողովրդական փոխադրամիջոցներին, հավատալիքներին, ծեսերին ու պաշտամունքին վերաբերվող տասնյակ ուսումնասիրություններ (Կ. Մեղրոսյան, Լ. Պետրոսյան, Յու. Մկրտումյան, Է. Պետրոսյան, Ժ. Խաչատրյան, Ռ. Վարդանյան, Հ. Խառատյան, Զ. Խառատյան, Ս. Հոբոսյան, Հ. Սարգսյան, Ս. Պողոսյան, Ա. Ստեփանյան, Հ. Մարության, Ա. Թադևոսյան, Մ. Գաբրիելյան,Ա.Դաբաղյան, Ն.Մարգարյան, և ուրիշներ): Դրանցից հատկանշելի են Վ.Բդոյանի «Երկրագործական մշակույթը Հայաստանում»(1972 թ.),Յու.Մկրտումյանի«Անասնապահության եղանակները Արևելյան Հայաստանում» (1974 թ.) ուսումնասիրությունները:Առանձին հետազոտությունների նյութ են դարձելնաև ժողովրդական տոները, հավատալիքները, ժամանցը, պարարվեստն ու թատերական ներկայացումները:Այս բնագավառներն իրենց արտացոլումն են գտել ազգագրագետ-բանագետ Սրբ. Լիսիցյանի «Հայ ժողովրդի հինավուրց պարերը և թատերական ներկայացումները» (երկու հատոր, 1958, 1972 թթ., ռուսերեն),«Հայկական հինավուրց պարեր»(1983 թ., ռուսերեն),Կ. Մելիք-Փաշայանի «Անահիտ դիցուհու պաշտամունքը»(1963 թ.), Ա. Օդաբաշյանի «Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում (1978 թ.),Վ.Բդոյանի «Հայ ժողովրդական

խաղեր» (երեք հատոր, 1963–1983 թթ.) արժեքավոր մենագրություններում և գրքերում:

Հայ ազգագրության կարևոր ձեռքբերումներից մեկը պետք է համարել «Աշխարհի ժողովուրդները» մատենաշարով «Կովկասի ժողովուրդներ» երկհատորյակում հայերին վերաբերող հատվածի շարադրումը ռուսերենով, որը հայոց նյութական ու հոգևոր մշակույթի յուրօրինակ հանրագիտարան էր և համապատասխանում էր ժամանակի գիտության պահանջներին: Հայաստանի անկախության հռչակումից հետո էական փոփոխությունների ենթարկվեց նաև ազգագրական հետազոտությունների ուղղվածությունը, սկսեցին կիրառվել նոր հետազոտական մոտեցումներ ու մեթոդներ: Բացի ավանդական մշակութային համալիրների ուսումնասիրությունից, հայ ազգագրության ուշադրության կենտրոնում հայտնվեցին նոր հետազոտական թեմաներ՝ հասարակական-մշակութային փոխակերպումների և դրանց դրսևորումների (աղքատության, ունեցվածքային բևեռացում, բնակչության արտագաղթ) մարդաբանություն, պատերազմի և էթնիկական հակամարտությունների մարդաբանություն, քաղաքական մարդաբանություն և այլն: Հայ ազգագրագետների ուշադրության կենտրոնում են նաև գիտության պատմության, տեսության ու մեթոդաբանության հարցերը: Վերջին տարիների ամենալուրջ հաջողությունը, որն ամբողջացնում է ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից հայ ազգագրության վերջին ձեռքբերումները, □Հայեր□ հատորի հրատարակությունն է ռուսերենով (Մոսկվա, 2012 թ.), որը գիտական բարձր մակարդակով ներկայացնում է հայոց մշակութային ժառանգության բոլոր հիմնական ոլորտներն ու կարևոր քայլ է հայոց մշակութային ժառանգության հանրայնացման և միջազգայնացման ճանապարհին:

Արդիականության ազգաբանության ոլորտում հիմնարար ուսումնասիրություններ են կատարվել հայ մշակույթի և ինքնության վերլուծության ուղղությամբ: Հայոց մշակույթի համապարփակ ներկայացման նշանակալից հետազոտություններից մեկը պետք է համարել Լ. Աբրահամյանի և Ն. Սուիզի խմբագրությամբ ԱՄՆ-ում հրատարակված «Հայկական ժողովրդական արվեստը, մշակույթն ու ինքնությունը» գիրքը (2001 թ., անգլերեն), ինչպես նաև Լ. Աբրահամյանի՝ ԱՄՆ-ում լույս տեսած «Հայոց ինքնությունը փոփոխվող աշխարհում»(2006 թ., անգլերեն) մենագրությունը: Արդիականության ազգաբանության ուսումնասիրությունների ոլորտում ակնառու նվաճումներից է «Հիշողության ազգագրություն» մատենաշարի հիմնումը և երեք մենագրությունների հրատարակումը (Հ. Մարության): Կիրառական ազգագրության ուղղությամբ ընթացող ամենամյա դաշտային աշխատանքների շնորհիվ հայաստանյան ընթերցողների լայն շրջանակների դատին են ներկայացված մի քանի մենագրություններ, որտեղ ներկայացվում է հայ ավանդական տոնական և հարսանեկան ծիսակարգերը, քննվում են դրանց արդիականացման հնարավորություններն ու սահմանափակումները (Հ. Խառատյան, Գ. Շագոյան և ուրիշներ):

Նշանակալից ուսումնասիրություններ են կատարվել «Էթնոսոցիալական և մշակութային գործընթացները Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի իրականացման ընթացքում: Մասնավորապես միգրացիոն

գործընթացներին, աշխատանքային զբաղվածությանը, պրոֆեսիոնալ մշակույթին, ընտանեկան հարաբերություններին, տոնածիսական համակարգին առնչվող հիմնահարցերի գիտական նկարագրության և վերլուծության ուղղությամբ (Լ. Վարդանյան, Ս. Մկրտչյան, Մ. Գալստյան):

Ազգագրության բնագավառում կատարած ուսումնասիրություններն իրենց արտացոլումն են գտել ինստիտուտի կողմից 26 հատորով հրատարակված «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարում և բազմաթիվ մենագրություններում:

Բանագիտություն

Գիտությունների ակադեմիայի կազմավորումից ի վեր, ինչպես վերն ասվեց, հայ բանահյուսական մշակույթի հիմնական հետազոտությունները մինչև 1959 թ. ընթացել է Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի հայ բանահյուսության բաժնում, իսկ 1960 թ. մինչ օրս այդ աշխատանքները կենտրոնացել են Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական զույգ բաժիններում՝ բանահյուսության տեսության ու պատմության և բանահյուսության տեքստաբանության:

Հայ բանահյուսական մշակույթի հետազոտման հիմնական ուղղություններն են՝

1. բանահավաքչական աշխատանքներ,

2. բանահյուսական բնագրերի կազմում և հրատարակում,

3. «Սասնա ծռերի» պատումների գրառում, հրատարակություն և ուսումնասիրություն,

4. հայ բանահյուսության գրառման և հետազոտման պատմություն,

5. բանահյուսության և գեղարվեստական գրականության փոխառնչությունների ուսումնասիրություն,

6. բանահյուսական տեքստաբանություն և դրան առնչվող տարբեր խնդիրների ուսումնասիրություն,

7. Մեծ Եղեռնի ականատես վկաների հուշապատումների և Եղեռնին նվիրված թուրքալեզու երգերի հավաքում և ուսումնասիրություն (այս ուղղության հիմնադիրը մեզանում բանագետ, բ. գ. դ. Վ. Սվազլյանն է, որի ուսումնասիրությունները թարգմանվել են աշխարհի ժողովուրդների վեց լեզուներով և հրատարակվել արտասահմանում):

8. հայ անվանի բանագետ-ժողովրդագետների գիտական ժառանգության հրատարակություն:

Առաջին կարևոր ուղղությունը բանահավաքչությունն է, որն իրականացվել է պարբերաբար կազմակերպված կոմպլեքսային ու նպատակային գիտարշավների և անհատական գործուղումների ձևով: Հայաստանի ազգագրական տարբեր շրջաններից և Հայաստանից դուրս գտնվող հայաբնակ վայրերից գրառվել են բանահյուսական տարբեր ժանրերի մեծաքանակ նյութեր, որոնցով համալրվել է ինստիտուտի բանահյուսական արխիվը՝ նյութական կայուն բազա ծառայելով տարբեր բնույթի բանագիտական հետազոտությունների համար: Արդյունքների մեծ մասն առայժմ կենտրոնացված է ինստիտուտի բանահյուսական արխիվում և վերամշակ-

ված 1970 թվականից ի վեր՝ ԷՀՄ-ի և համակարգչային թվայնացման մեթոդներով:

Երկրորդ կարևոր ուղղությունը բանահյուսական առանձին ժանրերի գիտական համահավաք բնագրերի կազմումն է և հետազոտությունը: Այդ տարիներին կազմվել և հրատարակվել են հայկական առած-ասացվածքների համահավաքը (Ա. Ղանալանյան, «Հայկական առածանի», 1951) և ավանդական զրույցների համահավաքը (Ա. Ղանալանյան, «Ավանդապատում», 1969), Մ. Մկրտչյանի «Հայ ժողովրդական պանդխտության երգերը» (1961): 1965 թ. հրատարակվել է Ս. Հարությունյանի կազմած «Հայ ժողովրդական հանելուկների» գիտական համահավաք բնագիրը, իսկ 1989 թ.՝ Ա. Ղազիյանի «Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգերի» համահավաքը:

1959 թ. առ այսօր կազմվել և հրատարակվել է «Հայ ժողովրդական հեքիաթների» բազմահատոր գիտական հրատարակությունը՝ ակադեմիկոս Հ. Օրբելու և Ա. Նազինյանի ընդհանուր խմբագրությամբ: Ցարդ լույս է տեսել 17 հատոր:

1970 թ. կազմվել և հրատարակվել է Ռ. Գրիգորյանի «Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգերի» գիտական համահավաքը, իսկ 1986 թ.՝ Գր. Գրիգորյանի «Հայ ժողովրդական վիպերգերն ու պատմական երգային բանահյուսությունը» համահավաքը և նույն խորագրով երկու հատոր գիտական հետազոտություն (1-ին՝ 1972, 2-րդ՝ 1982):

2006 թ. լույս է տեսել Ս. Հարությունյանի կազմած և խմբագրած «Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ» գիտական համահավաք բնագրերը:

1950–60-ական թվականներից ի վեր սկսվում է մի նոր շարժում հայ ժողովրդական վեպի՝ «Սասնա ծռերի» գրառման, հրատարակության և ուսումնասիրության ուղղությամբ: 1956 թ. լույս է տեսել Հ. Օրբելու «Հայկական հերոսական էպոսը» ուսումնասիրությունը, 1960 թ.՝ Գր. Գրիգորյանի «Հայ ժողովրդական հերոսական էպոսը» մենագրությունը:

1970 թ. ինստիտուտում կազմակերպվում է □Սասնա ծռերի□ նոր պատումների հայտնաբերման նպատակային արշավախումբ (ղեկավար՝ Ս. Հարությունյան), որը երեք տարիների ընթացքում (1970–1972 թթ.) Հայաստանի տարբեր շրջաններից գրառում է 80-ից ավելի նոր պատումներ, որոնց արժեքավոր մասը հրատարակվել է «Սասնա ծռեր» Գ, Դ հատորներում (հ. Գ՝ 1979 թ. և հ. Դ՝ 1999 թ.): Ժողովրդական վեպի նոր պատումների հայտնաբերման և հրատարակման ուղղությամբ անձնական նախաձեռնությամբ իրականացվել է Գր. և Վ. Գրիգորյանների («Սասունցի Դավիթ», 1977 թ.): Ութ նոր պատումներ և նույնքան տարբերակներ հավաքել և հրատարակել է Ռ. Գրիգորյաը (2000 թ.):

1975 թ. լույս է տեսել Ա. Սահակյանի «Սասնա ծռեր» պատումների քննական համեմատություն» մենագրական հետազոտությունը, 1977 թ.՝ Ս. Հարությունյանի կազմած «Սասնա ծռեր» տասը ընտիր պատումները՝ հետազոտությամբ հանդերձ:

Հայ առասպելաբանությանն ու ժողովրդական վեպերին նվիրված հետազոտություններ ունի Ա. Պետրոսյանը («Արամի առասպելը» 1997 թ.,«Արամազդ. պաշտամունք, կերպար, նախատիպեր», 2006 թ., «Հայկական էպոսը և առասպելաբանությունը», ռուսերեն և անգլերեն լեզուներով, 2002 թ.): Նա ակտիվորեն մասնակցում է «Սասնա ծռերին» նվիրված միջազգային գիտաժողովների կազմակերպման և զեկուցումների խմբագրման աշխատանքերին (2003–2012 թթ.):

2012 թ. լույս է տեսել Լ. Ղռեջյանի «Երկվորյակների առասպելը և դրա տարբեր դրսևորումները հայ վիպական ավանդության համակարգում» մենագրությունը:

Հաջորդ ուղղությունը հայ բանագիտության պատմության ուսումնասիրությունն է: 1985 թ. լույս է տեսել Ա. Ղանալանյանի՝ հայ բանահյուսության հետազոտմանը նվիրված «Դրվագներ հայ բանագիտության պատմության» ուսումնասիրությունը, Ս. Հարությունյանի «Մանուկ Աբեղյան. կյանքն ու գործը» (1970), Վ. Սվազլյանի «Սարգիս Հայկունի» (1973), Ս. Վարդանյանի «Տիգրան Նավասարդյանի ներդրումը հայ բանագիտության մեջ» (1991) ռուսերեն մենագրությունը և նույն հեղինակի «Մ. Միանսարյանցի կյանքը և գործը», (2004), Թ. Հայրապետյանի «Կ. Մելիք-Շահնազարյանի կյանքը և գործը» (2007) մենագրությունները:

2010 թ. լույս է տեսել Ս. Հարությունյանի «Բանագիտական ակնարկներ» ուսումնական ձեռնարկը՝ նվիրված հայ բանագիտության պատմությանն ու տեսությանը:

Հրատարակվում են առանձին ուսումնասիրություններ՝ նվիրված հայ բանահյուսության տարբեր ժանրերին և առանձին խնդիրների հետազոտությանը:

Մենագրական հետազոտությունների են ենթարկվում հայ ժողովրդական վիպերգերն ու պատմաերգային բանահյուսությունը (Ս. Հարությունյանի «Հայ ժողովրդական հանելուկներ» մենագրությունը (1960 թ): 1975 թ. հրատարակվել է «Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ» մենագրությունը: 2000 թ. Բեյրութում լույս է տեսել Ս. Հարությունյանի «Հայ առասպելաբանություն» ծավալուն մենագրությունը:

2012 թ. Մոսկվայում հրատարակվել է «Հայեր» կոլեկտիվ ուսումնասիրությունը՝ նվիրված հայ ազգագրության և բանագիտության հետազոտմանը, որին մասնակցել են բանագետներ Ս. Հարությունյանը և Ա. Ղազիյանը:

2010 թ. լույս է տեսել Ռ. Խաչատրյանի «Հայ ժողովրդական երգերի պոետիկան» մենագրությունը, 2008 թ.՝ Ե. Հարությունյանի «Հայ ժողովրդական սգո երգերը»ուսումնասիրությունը:

1970 թ. հիմք է դրվում «Հայ ազգագրություն և բանահյուսություն» գիտական մատենաշարին, որը շատ մեծ դեր է կատարում բանագիտական և ազգագրական նյութերի կազմակերպված հրատարակության և ուսումնասիրության գործում: Ցարդ լույս է տեսել 26 հատոր:

Առանձին ուղղություն են կազմում հայ ազգագրական առանձին շրջաններից գրառած բանահյուսական նյութերի տեղական ժողովածուները՝ ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով հանդերձ [Խ. Փորք-

շեյան, Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը (ՀԱԲ 2, 1971), Բենսե, Հարք (Մշո Բուլանըխ) (ՀԱԲ 3, 1972), Ս. Ավագյան, Արճակ, (ՀԱԲ 8, 1978), Ա. Նազարյան, Էջմիածնի և Աշտարակի բանահյուսությունից (ՀԱԲ 9, 1978), Գ. Գևորգյան, Ղզլար (ՀԱԲ 10, 1980), Գ. Միքայելյան, Նոր Բայազետ (ՀԱԲ 11, 1980), Ռ. Գրիգորյան, Գեղարքունիք (ՀԱԲ 14, 1983), Ա. Ղազիյան, Արցախ (ՀԱԲ 15, 1983), Վ. Սվազլյան, Մուսա լեռ (ՀԱԲ 16, 1984), Ռ. Խաչատրյան, Թալին (ՀԱԲ 19, 1999), Թ. Գևորգյան, Լոռի (ՀԱԲ 20, 1999), Վ. Սվազլյան, Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը (1994), Պոլսահայոց բանահյուսությունը (2000), Ա. Ղազիյան, Ս. Վարդանյան, Բաքվի հայոց բանահյուսությունը (2004), Է. Խեմչյան, Տավուշ (2000), Է. Խեմչյան, Իջևան (Զորոփոր) (2008), Հ. Հովսեփյան, Ղարադաղի հայերը, բանահյուսություն (2009, կազմողներ՝ Ս. Վարդանյան և Է. Խեմչյան, խմբագիր՝ Ա. Ղազիյան)]:

Նորերս (2013 թ.) լույս է տեսել «Կարս. հայոց բանահյուսական մշակույթը» աշխատությունը, իրագործված հեղինակային խմբի կողմից. Ս. Հարությունյան, Ս. Վարդանյան, Լ. Ղռեջյան, Է. Խեմչյան, Մ. Խեմչյան:

Հայ բանահյուսական մշակույթի հետազոտման ուղղություններից է նաև բանահյուսության ու գեղարվեստական գրականության փոխառնչությունների ուսումնասիրության հարցը, որը առաջադրվել և հետազոտվել է տակավին 1930-ական թվականներից Ա. Ղանալանյանի կողմից [«Պռոշյանը և ժողովրդական բանահյուսությունը» (1938), «Աբովյանը և ժողովրդական բանահյուսությունը», (1940), «Իսահակյանի ստեղծագործության ժողովրդական ակունքները» (1955), «Սայաթ-Նովայի ստեղծագործության ժողովրդական ակունքները» (1963), «Թումանյանը և ժողովրդական բանահյուսությունը» (1964)]: 1954 թ. Ա. Նազինյանը հրատարակում է «Սովետահայ գրականությունը և ժողովրդական բանահյուսությունը» մենագրությունը: 2011թ. լույս է տեսել Ա. Սարգսյանի «Պարույր Սևակը և ժողովրդական բանահյուսությունը» մենագրությունը:

Կարևոր ուղղություններից է նաև բանահյուսական տեքստաբանությանն ու դրան առնչվող տարբեր խնդիրների ուսումնասիրությունը:

Բացի գիտական համահավաքներից և տեղական բանահյուսական ժողովածուներից, որոնք տեքստաբանական կարևոր արժեք ունեն, այստեղ հարկ է նշել հատկապես հայ ժողովրդական հեքիաթների սյուժետային տիպերի նշացանկն իր բոլոր տարբերակներով՝ հեքիաթների միջազգային սյուժեների տիպաբանական համեմատությամբ (աշխատանքային թեմատիկ խումբ՝ գիտական ղեկավարներ՝ Ա. Ղազիյան, Թ. Հայրապետյան), որի կազմումը տակավին շարունակվում է և շուտով կավարտվի ու կարևոր նշանակություն կունենա հայկական հեքիաթների համեմատական հետազոտության համար:

Նոր մոտեցումներով կազմվել է բանահյուսական արխիվում պահվող 16 հազար ժողովրդական երգ-խաղիկների մոտիվային համաբարբառի քարտարանը, որի հիման վրա կազմվել է մինչև հինգ տարբերակ ունեցող երգերի համահավաք ժողովածու (գիտական ղեկավար՝ Ի. Լևին և Ս. Հարությունյան):

1970-ական թվականներից ի վեր բանահյուսության գույգ բաժինների գիտաշխատողների մասնակցությամբ սկսվել և հաջորդ տասնամյակին ավարտվել է ինստիտուտի բանահյուսական արխիվի գիտական մշակման և քարտավորման աշխատանքները, որը կատարվել է քանակական վերլուծության մեթոդով ու հաշվողական մեքենաների կիրառությամբ:

Հաջորդ ուղղությունը հայ անվանի բանագետ-ժողովրդագետների գիտական ժառանգության հրատարակությունն է: Հրատարակվել են Գ. Սրվանձտյանցի երկերը (հ. 1, 1978, կազմող՝ Ա. Ղազիյան), Ե. Լալայանի երկերի հնգհատորյակի երեք հատորները (հ. 1, 1983, կազմողներ՝ Կ. Մելիք-Փաշայան, Ա. Նազինյան, հ. 2, 1988, կազմող՝ Ա. Նազինյան), հ. 3, 2004, Ա. Նազինյան, Դ. Վարդումյան), Կ. Մելիք-Օհանջանյանի ռուսերեն թարգմանած «Սասնա ծռերի» ինը ընտիր պատումները (2004, խմբագիրներ՝ Ս. Հարությունյան, Մ. Դարբինյան-Մելիքյան, Ա. Եղիազարյան):

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ПАВЕЛ АВЕТИСЯН, СУРЕН ОБОСЯН, САРКИС АРУТЮНЯН

Резюме

Институт археологии и этнографии НАН РА является одним из немногих арменоведческих учреждений, занимающихся междисциплинарными исследованиями, где сосредоточены исследования в области археологии, этнографии, этнологии, эпиграфики, фольклористики, этносоциологии, физической антропологии, палеобиологии. В научной деятельности Института особое место занимают археологические, этнографические и фольклорные полевые исследования. Они постоянно проводятся с целью формирования и обогащения источниковедческой базы армянской истории и материального и нематериального культурного наследия Армении.

Институт был основан в 1959 году, и с первых лет основания до настоящего времени благодаря усилиям нескольких поколений ученых Института были раскопаны, собраны, обработаны и опубликованы многочисленные первоисточники, необходимые для изучения культурного наследия армян.

Сегодня также новое руководство (директор, канд. ист. наук П. Аветисян – с 2006 года по сей день, зам. директора, канд. ист. наук Г. Саргсян – с 2006 года по сей день) проводит значительные работы в направлении разработки и реализации исследовательских проектов, пополнения и подготовки кадров, организации полевых работ и научных публикаций. Институт получил международное признание, имеет прочные связи с многочисленными центрами и специалистами мира.

INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PAVEL AVETISYAN, SUREN HOBOSYAN, SARGIS HARUTYUNYAN

Summary

The Institute of Archaeology and Ethnography of NAS RA is one of the few research institutions in the sphere of Armenology which are involved in interdisciplinary researches. The disciplines on which the Institute is focused are: Archaeology, Ethnography, Ethnology, Epigraphy, Study of Folklore, Ethnosociology, Physical Anthropology and Paleobiology. Archaeological, ethnographical and folklore researches play a special role in the scientific activity of the Institute. They are aimed to form and fulfill source data base of Armenian history, as well as material and non-material cultural heritage of Armenia.

The Institute was established in 1959 and since the first years of the existence up to present numerous source materials have been excavated, collected, processed and published due to the efforts of several generations of scholars.

Nowadays also the new direction (director, PhD Pavel Avetisyan – since 2006 – up to present, assistant director, PhD G. Sargsyan – since 2006 – up to present) conducts considerable efforts in development and realization of research projects, education, organization of field works and scientific publications. The Institute found international acceptance, collaborates with numerous centers and specialists abroad.